

ՇՏԵՄԵՐԸ

ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԵՐ

ԼՊԻՒՒ 1:

1839.

ԹԻՒ 4:



Հնդկաստանի որմնաբերի մը երկունք:

Եւ կողմերէն զատվելնէս առաջ՝ կրսէ մէկ ճանապարհորդ մը, որ բւարի կնկան մը էրվելը տեսանք. որ աշխարհի դարերուն պատմութեանցը մէջ սնապաշտական սո վորութիւններուն մէկ չափազանց դէշն է: Որբւարին դեռ մանկամարդ էր՝ վայել լուչ ձեռով, ու իր մորթին գոյնը հազիւ թէ խտալացի կնկան մը գոյնէն քիչ մը սև էր: Ես միջոցիս դժուարութիւն մը չունեցանք մենք եղածին չափ փայտին դէղին մօտենալուն՝ ան բոլոր եղած բաները աղէկ մը տեսնալու համար: Ես կնիկը քանի մը ամբողջան պզտի տղէկ մը ունէր, որուն վրայ կրնայէր առանց մէկ մասնաւոր զգացումի մը, որպէս թէ մէկ առաւել մեծ պարտաւորութիւն մը թող չէր տարկոր իրեն աշխարհային բանի մը վրայ խորհուրդ ու նենալ. կարծես թէ՛ ամենեւին չիտէր որ իր զաւակը հոն էր: Իր դէմքին վրայ արդարև մէկ մեծ հանդարտութիւն մը կը թափաւորէրկոր ան սոսկալի պատրաստութիւններուն ատենը, որ իր բոլորտիքը կը լային, և որոնք էվելքը զարմացուցին իս իր մտացը հաստատուն առաջադրութեանը վրայ: Սակայն աս զարմանքը շուտ մը գնաց ինծմէ, ու անոր տեղը խղճալու ու միանգամայն զգուանքի զգացում մը ծնաւ սրտիս մէջը. և թէպէտ չի կրցայ իմ արցունքներս զալել անոր քաշելու չարչարանքին համար, բայց կրցայ նաև խնդալ

4 ամ

անոր վրայ իր անասնական անզգայութեանը համար, որով պատրաստված կերևար իր վերջին սոսկալի վործութեանը դէմ ելլալուն: Իսեւ մը ատեն անցաւ՝ մինչև որ ամէն բան պատրաստվեցաւ ան զոհաբերութեան մեծ գործին համար. և անատենը յայտնի կերևար որ՝ կնկանը զգացումները քիչ մը փոխվեցան. հիմայ իր սև փայլուն աչքին մէջը մէկ խառնակութիւն մը ծնաւ, որ հետզհետէ էվելցաւ ու այլանդակ էղաւ: Իր յիշողութիւնը կորստվեցաւ կամ թմրեցաւ ափսոսին դործածութեան, որ շուտ շուտ կըտրվի ասանկ դիպուածներուն ատենը, որպէս զի երկիւղը փարատէ ու քաջութիւն տայ աս թշուառական զոհերուն՝ որոնք Հնդկաստանցոց սնապաշտութեան անագորոյն ծէսէն կը վճարվին՝ ան ժամանակ մահուան մը պատահիլ, և ան ալ խիստ սոսկալի կերպով մը: Իր խելքը շուտով գլուխը կը դառնարկոր. և կերևար թէ ներսիդիէն մէկ ալեկոծութեան մը մէջ է. սակայն կըցուցնէր որ իր բրած առաջադրութեանը վրայ հաստատուն է: Վրայի ունեցած զարդարանքներուն ամէն մէկը իր բարեկամներուն բաժնեց, անանկ մէկու մը դէմքով՝ որ իր մտացը խռովութեան էր բրածը չի դիտեր: Բայց յանկարծակի իր տղէկիս լալու ձայնը լսելով, մայրական զգացումներուն բոլորը իր վրան դարձան. մատղաշ զաւակին յիշատակութիւնովը իր ազվըները բացվեցան, պրուկունքները դողդողացին, կուրծքը սկսեց հեալ, ու շունչը կարծրցաւ:

Ցաթկեց առաջ գնաց, սպասաւորին գիրկէն յափշտակեց տղէկը, ու իր կուրծքին վրայ սխմեց սիրով: Իր հեծկլտութքը որ իրեն բրած յիմարութեանը վրայ սաստիկ կը դատախաղէր, մինչև իմ ականջներու հասաւ. բայց ալ ճարը չի կար անիկա ան վճիռէն ազատելու, որոնք ինքը իր

կամքովը ընտրեր էր : Հիմայ ալ յայտնի էր բոլոր իր քովը կայնորներուն՝ որ ինքը ներսի դիէն կըստարտափէր կոր ան սոսկալի զոհաբերութեան վերջին գործքէն . ինքը մեր առջեւ կայներ էր մունձ՝ և անշունչ արձան մը յուսահատութեան :

Չհաղործութեան պաշտօնը կատարող Պրամիսները տեսնալով՝ որ ալ ժամանակ է աս փարշէի զոհը երելու , ու վախճալով որ չըլլայ թէ կնկանը միտքին հաստատուութիւնը թուլնայ , հրաման ըրին որ բոլոր իր ազգականները՝ բարեկամները՝ ու սպասաւորները մէկ դի երթան : Քանի մը բալէ ին մէջը փայտին դէպին բոլորաբար մէկ մեծ միջոց մը բացվեցաւ , և ան միջոցին մէջը մէկը չի կար բաց ՚ի ան ապերձանիկ զոհէն՝ և իր պիղծ զոհաբերողներէն կամ Պրամիսներէն : Հիմայ աս գաղափարաբար Պրամիսներուն մէկը մօրը դիրկէն քաշեց տղեկը՝ ու մէկ սպասաւորի մը տըւաւ , և մննէին հոգ չընելով ոչ մէկին լալը՝ և ոչ մէկալին հոգեվարութեան ցաւերը : Որքեւարին՝ որ ալ հիմայ իրաւցընէ գեղեցիկ կերեւալիոր , գիտնալով զիւսուն գալիքը՝ բնութեան ջանքերը մէկ տեղ ժողովեց , իր ծունկերուն վրայ դետինը ինկաւ , աչքերը դէպ ՚ի երկինքը վերցուց , ու անձայն տաւապանքներու կիրքերովը ձեւվըները իրար կապեց : Պրամիսներուն մէկը իրեն մօտենալով՝ ինկած տեղէն վերցուց անիկա , ու իրեն պէս անգութ անողորմ մէկին օղնութիւնովը բռնութեամբ ստիպեց դէպ ՚ի փայտին դէպին երթալ :

Կնիկը աշխատեցաւ , և ան զօրութիւնը որով յուսահատութիւնը զինւորէր էր անիկա , կարողացուց զինքը՝ որ ան տարտաբոսական անապաշտութեան սեղանին առաւ դերեցներուն դէմ դնէ : Կնկարեկից քահանաներուն շատերը՝ ասիկա տեսնալով առաջ վազեցին , ու բռնութեամբ տարին անիկա դէպ ՚ի փայտակոյտը :

Կնիկը ձայնը հանածին պէս՝ խափանեցին անիկա փողերով ու հարիւրաւոր կէս խնթութեան աղաղակներովը , որոնք ժողովրդերէն իրենց կրօնքին կոյր հախանձաւորութեան սոսկալի կատարածը տեսնալու : Իր ջանքերը ալ անօգուտ էին , շուտ մը ինքը քաշեցին բերին փայտին դէպին

քովը , ու անոր վրայ հանեցին . ալ հիմայ կընիկը բոլորովին անզգայ դարձաւ : Եւ բոր փայտակոյտին վրայ նստաւ , երկանը գլուխը իր գերկը դրին . փայտին տակի յարդը բռնկեցուցին , ու բոցը մէկէն ՚ի մէկ ելլալով ան իղձալի կնկանը չորս դին պատեց , ծածկելով անիկա մարդկային կարեկցութենէն : Թշուաւ կինը իր ցաւերուն ատենը փայտերուն վրայէն դուրս չի ցալթկելու համար՝ քիչ մը խորունկ դրէր էին անիկա , և իր վրան պատկոյններ դնելով Պրամիսները երկկողածութեամբ կըստասաւորէին աս խորհուրդին , ու ամէն կերպ զգուշութիւնները կընէին՝ որ կարող չըլլայ մէկ կերպով մը դուրս գալու :

Կնկանը տանջանքները շուտով վերջացան , որովհետեւ սաստիկ բորբոքելով վառեցաւ մոխիր դարձաւ . և ասանկով ան դժոխային արարողութիւնը կատարեցաւ :

Երբեք :

Երկուրէր կըկնային մարմիններուն մէկը ըլլալով՝ և մանաւանդ մարդու բնական լոսնը , կըվայլէ որ անոր վրայ շատ կամ քիչ տեղեկութիւն ունենանք :

Ուստի երկիրը բոլոր ուրիշ մոլորակներուն պէս զննածէ՝ կամ կըր է : Թէ որ պարզ օր մը ծովեզերքը կայնելով նայինք որ մէկ նաւ մը ճամբայ կըլլայ մը և իցի կողմը երթալու , պիտտ առաջ կըտեսնանք որ նաւին մարմինը աներեւոյթ կըլլայ մեր աչքին . ետքը վերի մասունքները , և վերջապէս կայմին գլուխը բոլորովին կըծածկըվի մեր տեսութենէն : Կաւին մէջի եղողներն ալ կըտեսնան՝ որ առաջ ծովեզերքը * չորիզոնէն վար կիջնայ , անկէ ետեւ տունները և շինվածքները , և վերջապէս իրենց ձգած քաղաքին խիստ բարձր աշտարակներուն գլուխները :

Հիմայ յայտնի է՝ որ ասիկա կըպատճառի նաւին ու ան քաղաքին մէջտեղը եղած

* Չորիզոն կամ Եղերաք ինչպէս անիկա գրեթէ ուրիշ երկնիկն է՝ երբեք ծարերը Թեպէ կերտան ինչ կարգու հետքը մասնաւոր : Երբեք Երբեք-Երբեք Չորիզոն ինչպէս Երբեք ճշմարիտ Չորիզոնը երբեք գոյնաւոր երբեք հասարակական ինչպէս , ոչ ոք չի : Երբեք Կիսառնական՝ Երբեք Կիսառնական :

Ջուրերուն կորնթարդ կամ ուռեցած ըլլալէն: Ինչու որ եթէ ծովին մակերևոյթը միայն մէկ դուր դաշտ մը ըլլար նէ, մեծ բաները երկան ատեն պիտի տեսնուէին, ու պղտիկները առաջ աներևոյթ պիտի ըլլային. բայց ընդ հակառակը կրտսնանք որ՝ առաջ նուրն մեծ մարմինը աներևոյթ կը ըլլար, ու ետքը կայմին բարակ ծարը:

Դարձեալ՝ նաւաւարները որոնք շատ անգամ բոլոր երկրիս շրջապատը նաւով պտրտեցան, փորձով կը հաստատեն անոր կորնթարդ ըլլալը: Ըստ նաւաւարները շարունակ դէպ ՚ի Բրեմստան կողմը նաւելով՝ նորէն իրենց ձգած երկիրը ու նաւահան գիտը եկան հասան: Բակէց կիմանանք թէ՛ երկիրը կամ գլանաձև պիտի ըլլայ՝ և կամ գնտաձև: Ընհնար է որ գլանաձև ըլլայ, որովհետեւ եթէ անանկ ըլլար նէ՝ Սիջորեական հեռաւորութիւններուն ալ մէնք իրարու հաւասար պիտի ըլլային, որ եղած զննութիւններուն հակառակ է: Ուրեմն երկիրս գնտաձև կամ կոր է:

Երկիրս դէպ ՚ի Հիւսիս ու Հարաւ ալ կորնթարդ ըլլալը կը հաստատուի բեւեռին բարձրութենէն, և բեւեռն բոլորտիքը դարձող աստղերէն: Երբոր մէկը Հասարակածէն դէպ ՚ի Հիւսիսային բեւեռը ճամբորդութիւն ընէ, կը տեսնայ որ քանի յառաջ երթայ՝ Բեւեռային աստղը կը բարձրնայ, ու Հիւսիսային կիսագունտին հաստատուն աստղերը Բրեւելէն ելլալու և Բրեւմտեան Հորիզոնէն իջնալու տեղը հետըզհետէ կը շարունակուի ու Հորիզոնէն վեր կը մնան ու Բեւեռային աստղին բոլորտիքը կը դառնան: Ետը հակառակը երբոր դէպ ՚ի Հասարակածը և Հարաւ ճամբորդութիւն ըլլով, Հիւսիսային բեւեռը միշտ ցածնալու վրայ է, և նոյն կիսագունտին աստղերը հետըզհետէ կը քիչնան, և Բրեւելեան Հորիզոնէն կը ընան ու Բրեւմտեանէն կիջնան: Որչափ աստիճան մէկը դէպ ՚ի Հիւսիս երթայ, այնչափ աստիճան Հիւսիսային բեւեռը կը բարձրնայ. ուստի հիմայ ասկէց աս ընդհանուր ճշմարտութիւնը կը հասնենք: «Երկրիս մակերևոյթին վրայ որ և իցէ տեղ որչափ աստիճան լայնութիւն

ունի նէ՝ * Հասարակածէն, ան կողմի բեւեռը նոյնչափ բարձրութիւն՝ և միւս բեւեռը նոյնչափ ցածութիւն ունի անտեղի Հորիզոնէն»:

() Երկրակի համար Կոստանդնուպօլիս 41° , և 1° Հիւսիսային լայնութիւն ունի. ուստի Հիւսիսային բեւեռը 41° և 1° բարձր է Կոստանդնուպօլիսի հորիզոնէն, և Հարաւային բեւեռը նոյնչափ աստիճան ցած է:

Երկիրս գնտաձև ըլլալուն մէկ ուրիշ փորձն ալ աս է որ, որչափ բարձր ելանք՝ այնչափ շատ տեղ կը տեսնանք: Սէկ մարդ մը տանը գլուխէն կամ ուրիշ բարձր տեղէ մը կրնայ տրեգակը մարը մանալու առ տեսնուի տեսնալ, երբոր վարը կեցողները ալ չեն կրնար տեսնալ անիկա: () Պապարիկ գունտով բարձրը ելողները՝ որոնք երկիրս մթութեան մէջ ձգեցին, շատ անգամ տեսան արեգակը՝ որ իր շքեղ պայծառութիւնովը ծովանման ամպերուն մէջ ջէն վեր կը ըլլար. և ետքը երբոր վար երկրիս վրայ իջան՝ նորէն բոլորը մութ դասն:

Եւ թէպէտ վերը հաստատուած ճշմարտութիւններէն կերեալ՝ որ երկիրս գնտաձև է. սակայն անիկա կատարեալ գնտաձև չէ: Երկրի աստեղաբաշխներուն և երկրաչափներուն խիստ զգուշաւոր չափերովը գտնուեցաւ՝ որ երկրիս տրամագիծը Բրեւելէն դէպ ՚ի Բրեւմտեան ձգված՝ առաւել երկան է, քան թէ անոր բեւեռէ բեւեռ

* Երբեք գտնուին վրայ մէջ պէզոց երկու բեւեռներէն հաստատուելու անհնարութիւնը: Եթէ գիծը իմ շրջանային Հասարակածը չը անցնէ. ինչու որ ան գիծին որովք ինչո՞ւ պէտք էր բոլոր պայմաններէն ինչո՞ւ ժամ ցորէի՞ն պատեւելու ժամ գիշեր ունին: Ըստ հաստատուելու գիծը երբեք գտնուի երկու հաստատուելու իրաւունք. որոնք են Հիւսիսային Կիսագունտն ու Հարաւային Կիսագունտը:

† Թեւե՛ն մը վրայ ու նշանը՝ քանի՞ անտիճան իջող-ցող նէ. և ու նշանը՝ քանի՞ անտիճան իջող-ցող նէ: Հասարակածը 360 աստիճանի իրաւունք ունի. մէկ աստիճանը է 60 Երկրաւարական միոն և 75 () աստիճան միոն. մէկ րոպէն իմ մանրամասը մէկ աստիճանին 60 մասին մէկը՝ իմ մէկ միոն մըն է: Սիւն վայրկեանը իմ մանրերկրորդը՝ որ ու նշանը՝ ինչո՞ւ նշանայ, մէկ մանրաստիճան իմ մէկ միոնին 60 մասին մէկն է: Հասարակածին մէջէն բեւեռները 90 աստիճան են. մէկ բեւեռէն մէկը մէկը 180 աստիճան է:

ձգված տրամագիծը : Ուստի երկրիս Հա-
նարակածին կողմը քիչ մը դուրս ուղեցած
է , ու Ռեւոլյուցիոն կողմը տափարակ է ,
որով ոսպի հմանութիւն ունի քիչ մը :

Հիմայ աս չափերը և զննութիւնները
կըհաստատեն թէ՛ երկիրը ուսնաձև է , ու
բուն երկան կամ Հասարակածին տրամա-
գիծը ճիշտ 7924 *մղն է , և Ռեւոլյուցիոն
տրամագիծը 7898 մղն է : Ուստի անոր
տրամագիծին միջին չափը 7912 մղնի չափ
է . և երկու տրամագիծներուն իրարմէ
տարբերութիւնը 26 մղն է :

Գաղղիացոյ Միացեալ իշխանի կամ ճեմարա-
նը ստուգելով հաստատեց թէ , երկրիս
միջին տրամագիծը 45° Հիսթիային լայ-
նութենէ մինչև 45° Հարաւային լայնու-
թիւնը ստոյգ 7912 մղն է :

Երկրիս որ մէկ մոլորակ մըն է , Երե-
գակնային Գրութեան մէջը մէկ աղէկ տեղ
մը դրված է : Մենք իմաստ Ստեղծողը հա-
ճեցաւ երկնային մարմիններուն մէջը զնեւ
անիկա , ուրկէց դրեթէ ամէն իր դրացի
մոլորակները լոկ աչքով կրնան տեսնուիլ :
Մոլորակներուն կարգին մէջ Երուսեակէն
հաջորդ Երկիրն է , ու Երեգակէն համընթաց
երրորդ մոլորակն է :

Երկիրս Երեգակին բոլորտիքը արեւ-
մուտքէն դէպ 'ի արեւելք 365 օրվան՝ 5 ժա-
մին՝ 48 րոպէին և 48 վայրկեանին մէջ ան-
գամ մը կըդառնայ . և նոյն կերպով կը
դառնայ նաև իր առանցքին վրայ՝ 23 ժա-
մին՝ 56 րոպէին՝ և 4 վայրկեանին մէջ :
Եւջինը կըսվի Տարեկան Շրջան , և կը
պատճառէ եղանակներուն փոփոխութիւ-
նը . երկրորդը կըսվի Օրական Շրջան , և
ուսկէց կըպատճառէ ցօրեկը ու գիշերը :

Երկրի միջին հեռաւորութիւնը Երե-
գակէն 95,000,000 մղնի չափ է . և հե-
տևապէս իր շրջանին վրայ մէկ ժամին մէ-
ջը 68,000 մղն ճամբայ կառնէ : Երկրի
հասարակածին տրամագիծը 7924 մղն ըլ-
լալով , իր առանցքին վրայ կըդառնայ մէկ
ժամին մէջ 1040 մղնի չափ : Այսպէս ահա
Երկիրս՝ որուն վրայ մենք կրթնակինք , և
որ իբրև ամենահաստատ շինուածքի մը ան-
սասանելի հիմը այսչափ դարեւր կեցաւ , ա-

մէն վայրկեան իրեն կենդրոնին վրայ արագ
արագ կըդառնայ , և նոյն ատենը դատարկ
միջոցի մը մէջ դէպ 'ի յառաջ կըշարժի
զարմանալի արագութեամբ :

Աս երկու կերպ շարժումը բոլոր երկրի
վրայով իմացվելու է՝ ամէն իր մէջի մա-
սունքներովը և իր մակերևութին վրայ
բռնած բաներովը . այսինքն՝ իր թանձր
մարմնովը , իր բոլորտիքը խաղացողով
կիսնոսովը , իր վրայ հանգած օդովը , և
օդին մէջը իրեն վրան պըտըտող ամպերու
վը մէյտեղ կըդառնայ երկիրս :

Պիտի շարունակիլ :

Իշխել երկր :

ՄԵՐ ՊՈՐՈՅԻ դուքսը մեծ իշխանու-
թիւն ունէր իր կրկնը վրայ , ու բնաւ
չէր ձգեր որ պղտի բաներով բորբոքի ա-
նիկա , որուն մէջը երբեմն առաքինի մար-
դիկ անգամ չի կրցան ինքրզնքնին կառա-
վարել : Աս դուքսը մէկ օր մը երբոր բա-
րեկամի մը հետ ձիով տեղ մը կերթարկոր՝
և օդը սկըսեց անձրևել , սպասաւորին
կանչեց որ վերարկուն բերէ : Սպասաւորը
վերարկուն շուտ մը չի բերելուն համար
անգամ մըն ալ կանչեց անոր համար : Սպա-
սաւորը ձիուն կանակէն անիկա քակելու
վրայ ըլլալով չի կրցաւ եկեր էր իր տէ-
րովը : Այ երջը անձրևը որ սաստկացաւ ,
դուքսը նորէն կանչեց՝ ու հարցուց թէ ինչ
կրնէկոր որ առչափ ժամանակ իր վերար-
կուն չի բերաւ :

Կոպիտ ծառան մըմալով ըսաւ , «Թէ
որ շուն ու կատու թափի երկինքէն պէտք
է որ կենաս՝ պարոն , մինչև որ վերարկուն
ձեռք ձգեմ» :

Դուքսը դարձաւ ու անշիթ իր պով
մը իր բարեկամին ըսաւ , «Թէ որ աշխարհ
ինձի տային , տա տղին կերբէն մէջ դառն
վիլ չէի ուղեր ես» :

Ինչպէս որ վարդին թուփը անուշահոտ ծա-
ղիկներով ու սուր փուշերով կըբաղկանայ , ինչ-
պէս որ երկինքը երբեմն բաց ու երբեմն ամպոտ
կըլայ , երբեմն պարզ՝ ու երբեմն փոթորիկ մը
կըհանէ , սասնկ մարդուն կեննքն ալ յոսով
ու վախով ուրախութիւնով ու տրամուլթիւնով
բերկրութիւնով ու ցաւով լեցուն է :

*Տէր (Թի-3 , Երեւ 37 , Նախնի-Թիւնի Դ-ը :

Չիտնայ մեկերուն՝ գոյնէրուն՝ եւ ընդհանուր
բնաւորութեանց լըայ :

ՉՈՒԿԵՐՈՒՆ՝ որ այնչափ առատ են , ու
միշտ անոնք կը տեսնանք , աղւոր ձևեր
ունին : Հատերը խիստ գեղեցիկ գոյներով
ու ջինջ և փայլուն մորթով և թեփերով
զարդարված են : Ոմանք ունին ոսկեղէն
բիծեր , որ անոնք համբերը դժուարին է .
ու շատերը արծաթի պէս կը փայլեն , որպէս
թէ աս երկու մետաղներուն մասունքները
իրենց մորթին վրայ սփռած են : Աւրիշ-
ները մէկ նուրբ կապուտ գոյն մը կը ցուցը-
նեն , և ոմանք շատ աղւոր կանաչ գոյնով
ներկած են : Բնդհանրապէս ձուկերը ի-
րենց ձևերովը՝ գոյներովը՝ պայծառութիւ-
նովը՝ արագ ու փոփոխական շարժմունքով
վը , և բնդհանուր կայտառութիւնովը ու
զօրութիւնովը՝ բերկրութիւն ու զարմանք
կը պատճառեն մարդուն :

Լսոնցմէ մէկ քանիններէն՝ ի զատ բոլորն
ալ անվնաս են մեղի . շատ քիչ կը գտնու-
վին , որ նաև իրենց տէրութեանը սահմա-
նին մէջ գտնուված ատեննիս , վնասեն մե-
ղի . հապա բոլորն ալ , մինչև անգամ ա-
նոնցմէ խիստ թշնամին՝ թէ և որչափ մեծ
ըլլայ , ծովին մէջը անպաշտպան ու անօղ-
նական կը մնայ մեր զօրութեանը դէմ :

Չուկերուն բնդհանուր բնաւորութեանը
մէջ ոչ թշնամութիւն կայ՝ և ոչ որկրամո-
լութիւն . հապա հեղ են՝ անվնաս՝ ու բն-
կերական : Խաղաղութիւն սիրող կենդանի-
ներ են . իրենք իրենց երջանիկ են , ու ըստ
մեծի մասին իրարու հետ միաբան՝ առանց
անգլութեան կամ գէշ կիրքերու նշան մը
ցուցնելու : Ենոնք որ ուրիշներուն կե-
րակուր ըլլալու համար որոշված են , ան
ճամբուն մէջը կը մեռնին , ու ան վախճա-
նին համար կը փնտրուվին՝ ու կը բռնուվին ,
մինչև որ զերենք . հալածողն ախորժակը
արդիւն անիկա ալ անոնց ետեւէն իյնալը :
Իրաւունք չէ որ՝ մեղմէ աւելի որկրամոլ
կամ յափշտակող կոչենք անոնք՝ իրենց աս
բնաւորութեանը համար , որ մենք կը բռն-
նենք կուտենք՝ ոչ միայն ձուկերը , հապա
նաև ոչխարները ու կովերը : Թռչունները
և ուրիշ կենդանիները :

Ի՞նչ . պէ՞տք : — Սեռաղ . հարէն : — Կուրբ . նա-
ղէ :

Չուկերուն բնաւորութեանը հեղ ու ան-
վնաս ըլլալը յայտնի կերեայ անոնց մե-
ծամեծ տեսակներուն մէջէն խիստ շատե-
րուն մէջը : Կրէնլանտիայի մեծ կէտ ձու-
կը ուրիշ ձուկի մը ետեւէ չիյնար , խաղաղ
կենսք մը կը վարէ , ու իր ունեցած զօրու-
թեանը նայելով անվնաս է : Սեծ՝ Կիտոս
ձուկը՝ որ բոլոր ձուկերուն մեծը ու զօրա-
ւորն է , Ովկիանոսի մէջ անվնաս ու խա-
ղաղութիւն սիրող բնակիչներուն մէկն է :
Են ահագին անդունդին մէջը գտնուված ու-
րիշ վիթխարի ձուկերուն մէջը կը խաղայ՝
առանց վնասելու զիտաւորութիւն մը ու
նենալու :

Իրաւ Ովկիանոսը իր մէջը քանի մը տե-
սակ ուրիշ բնաւորութիւն ունեցող կեն-
դանիներ ունի , ինչպէս որ անտաւները ու
լեռները իրենց մէջ զայլերը ու վազերը
ունին , բայց անոնց տարբեր բնաւորութիւն
ունենալուն պատճառը՝ կը թուի թէ , զըլ-
խաւորաբար իրենց կերակուրը ճարելու
համար է : Են ձուկերը՝ որ իրենց ապրե-
լուն համար ուրիշները կուտեն , անոնք մի-
այն բնութեան մէջը գտնուված մասկեր
գողաններուն կը նմանին . բայց ըստ մեծի
մասին անտարբեր կամ անվնաս են մէկըզ-
մէկու , ու շատերը էվելօք բնկերական են՝
խուռն բազմութեամբ ամէնը՝ ի միտսին
հաւքելով խաղաղութեամբ :

Չուկերը ոչ ձայն հանելու գործարան
ունին , ոչ ալ թոր . սակայն մէկ քանինները
կրնան ձայն հանել : Գոն ձուկերը խուռն
բազմութեամբ ճամբորդութիւն ըրած ա-
տեննին՝ բարձր ձայն մը կը հանեն շընչե-
լու : Պաքալա ձուկը երբոր շօշափվի՝ սու-
լելու ձայն մը կը հանէ : Սեծ ծովային որ-
թը ցուլի պէս կը բառանչէ՝ երբոր անհան-
գիստ ըլլայ , ու քնացած ատենը կը խուկայ :
Հասարակ ծովային որթը ողորմելի կեր-
պով կողբայ՝ մինչև որ ծովը համար , եր-
բոր ցամաքին վրայ իր ետեւէն իյնուվի որ-
սալու համար : Աւրիշ տեսակ ծովային որթ
մը եզի նման ձայն կը հանէ . մէկ ուրիշ մը
խողի պէս կը խանչէ՝ ու ձիու պէս կը խփին-
ջայ . և մէկ երբորդ տեսակ մը կայ , որուն
լալ տեսնուված է բարկացած ատենը :

Չուկերը չորքոտանիներէն ու Թռչուն-

Թորք . առջիկէր : — Գոն , Ենոնք պալլը :

հերէն էվելի երջանկութիւն ունին . զիւրութեամբ կրթականաման կերակուրով . եղանակներուն փոփոխութենէն ու զանազան կլիմաներու տակ նեղութիւն մը չեն դպար : Միշտ բարեխառնութեան մէջ են . դրեթէ բոլոր ուրիշ կենդանիներէն էվելի առողջութիւն ու զօրութիւն կրկայելին : Բնականաբար երկար կապրին , ու մէկ քանի տեսակներուն կեանքը մարդուս կեանքէն ալ երկան է :

Չուկերը բուսականներուն և ուրիշ անասուններուն սէս պիտանի են մարդուս , թէ կերակուր ըլլալու և թէ ուրիշ բաներու . զոր օրինակ բալենան՝ որ եղ կուտայ վառելու , ու ոսկոր՝ զանազան բաներու համար զործածելու :

Չուկերը մեզի մեր Ստեղծողին զօրութիւնը կըցուցնեն , իր Լինանկարողութեամբ վրայ մեր գիտութիւնը կէվելցունեն , ու յայտնի տղացոյց մը կուտան մեզի իր անհուն իմաստութեանը :

ՓԻՎ

Քիշ կենդանիներ կան՝ որոնց վրայ մարդիկ այնչափ հոգ ունեցան՝ քան որչափ փիղին վրայ : Տաք կլիմաներուն մէջը՝ որպէս թէ մարդուս ծառայելու համար ստեղծված , ամէն պիտանի հանգամանքները ունի փիղը : Ուրիշ է՝ ու զոր ծուռեայ , և հաստատուն , խառնուածքը հեղահողի է , ընութիւնը՝ ընկերական , և այնչափ ճարտար է՝ ու ընդունակ վարժութեան , որ գրեթէ ամէն կերպ ծառայութիւնները ընելու կրկարժըմի : Բնածուռի կերպարանք մը ունի . զիւրը՝ մեծ , աչքերը՝ պզտիկ , ակնանջները՝ լայն ու կախ , մարմինը՝ թանձր , կռնակը՝ բարձր , ու ոտքերը՝ ծառի բունի պէս անձե . մարմը մութ գոյն մը ունի՝ սևի մօտ : Կոր ծնած ժամանակը իրեք տաք բարձրութիւն ունի աս կենդանին . մինչև տասնութեց կամ տասնութի տարու ըլլայ . նէ՛ կրմեծնայ . ու կըսվի թէ հարիւր տարիէն էվել կապրի : Քանի որ պզտիկ է կենդանին՝ խաշոր ակուսները չեն բուսնիր . բայց կատարեալ

մեծնալէն ետքը կըսկըսին դուրս ցցվել որ երբեմն եօթը կամ ութ տաք կերկրնան : Բնահասարակէս իր բարձրութիւնը ինը կամ տասը տաք կըլլայ . բայց մինչև տասնըչինգ տաք բարձրութեան հասնողը եղած է : Իր կերակուրը է բուսական բաներ , ծառերուն տակէն ելած բողբոջներ , ցորեն ու պտուղ :

Փիղին ճարտարութիւնը՝ ուժը՝ ու վարժութեան ընդունակութիւնը՝ առաջուց հետե զարմանք ու հիացում պատճառեց ան ամէնուն՝ որ դոնէ քիչ մը հետաքրքրութիւն ունեցան իմանալու աս հանգամանքները : Զատոյներ կարելի է ընցունել ըստայլ վկայութիւններով հաստատված զործքերով՝ աս հանգամանքները բացատրելու համար : Օտարմանակ յաջողակութիւնը՝ որով փիղը կըզործածէ իր կնճիթը ձեռքով կատարելու բոլոր բաներուն , մեծ պապոյց մըն է իր գերազանցութեանը : Պիլեֆոն Գաղղիացի բնաբանը կըսէ , «Ոչ թէ միայն իր կնճիթը շարժելու զօրութիւն ունի , հապա կրնայ երկընցունել ու կարճըցունել անիկա . կրնայ դէպ ի վեր ու դէպ ի վար ոյրել » ու ամէն կողմը դարձունել : Իսկ կնճիթին ծայրը շրթունքի պէս է , ու վրայի կողմը երկընցած է մատի նման . ու ահա ասով է՝ որ ամէն ան բաները կրկատարէ՝ ինչ որ մենք մասնորոշման կը նենք : Կրնայ գետինէն մէկ փարան տանել . ծաղիկ կրփետտէ մէկիկ մէկիկ , կապերը կըքակէ , դուռները կըբանայ ու կըզոյնէ բանիւքը դարձունելով ու կըլաբը ետ քշելով :

Բնութեան մէջ բոլոր ստեղծուածները իրենց ստոյգ ու առանձին արժողութիւնը ունին . և աս մասին արդարութեամբ քննելով կէս բանականութիւն ունեցող փիղին հանգամանքները , պարտինք տալ իրեն բեշկ միայ կենդանիին հանձարը , կապիկին ճարտարութիւնը , շանը ունեցած սէրը , ու ասոնց վրայ պարտինք էվելցունել իր առանձին ու նշանաւոր ուժը՝ մեծութիւնը՝ ու կեանքին երկայնութիւնը :

Իր դէնքերը՝ այսինքն երկան ակունակ

Փիղ . Ֆել . — Գործունեայ . էվել . պար . — Խառնուածք . ինչու :

Կնճիթ . խառնուածք . — Երկունք . գոտի . — Բեշկ միայ . գոտի . — Զանձար . Երկունք . Կապիկ . Բացառ :


բը , պէտքը չէ որ մոռնանք , որոնք իրեն պաշտպանութիւններն են , և անոնցմով աւելցնելը կըլլալէ : Ի՞նչ որ իր շարժմունքը ուղենք ստորագրել , բաւական է ըսել՝ թէ իր տակի գետինը կըդողայ : Կնճիթովը ծառերը կըկործանէ . իր մարմինը պատի մը կըթընցունելով կրնայ պատը պատռել : Օտարհուրելի է իր ուժովը , ու անյաղթելի միայն իր մարմինին ծանրութիւնովը՝ ու մտքին հաստութիւնովը : Կռնակին վրայ մէկ աշտարակ մը զենքերով կազմած ու մէջը շատ մարդով կրնայ տանիլ պատերազմելու : Բիւք մը Զանք ընելով մեքենաներ կըշարժէ՝ ու բեռներ կըքաշէ , որ վեց ձի հազիւ կրնան քաշել :

Եւ սքանչելի զօրութեանը հետ սրտտուութիւն , խոհեմութիւն , հանդարտութիւն , ու կատարեալ հնազանդութիւն ալ ունի : Բարկութեան ժամանակը բնաւ իր բարեկամները չի մոռնար , բայց միայն իրեն վնաս տըւողին կըվնասէ : Կրկան ժամանակ կըլիշէ իրեն եղած բարերարութիւնները՝ ինչպէս նաեւ վնասները :

Եւ դարմանալի կենդանիին ունեցած ըսքանչելի բնական ճարտարութիւնը քիչ մը բացայայտելու համար , հետեւեալ պատմութիւնը կըքաղենք Վուլիէր Վաղվապի բնաբանին Կենդանաբանութենէն : Պատմելու դիպուածնիս պատահած է 1805ին Հնդկաստանի մէջ Պուրթիփուռ քաղաքի պաշարման ատենը : «Բանակին մօտը գտնուած հորերուն մէկին քովը՝ ուրկէջ զինւորները սովորութիւն ունէին ջուր բերելու , երկու փղապան իրենց փիղերովը մէյտեղ կեցեր էին : Փիղին մէկը խիստ մեծ ու զօրաւոր էր , բայց մէկալը անոր հետը բաղդատելով պզտիկ ու տկար էր : Եւ պզտի փիղին տէրը հորէն ջուր հանելու համար դոյլ մը աւեր էր հետը՝ որ փիղը իր կնճիթին ծարէն կախած կըտանէր . բայց մեծ փիղը ասանկ հարկաւոր ամանի մը կարօտ ըլլալով , կամ ինքիրմէն և կամ տէրջը դրգէլէն յափշտակեց ան դոյլը իր տկար ընկերէն : Պզտի փիղը գիտնալով իր տկարութիւնը չի համարձակեցաւ յայտնի կուռիլ միւսին հետը , թէպէտ և զգաց իր

քաշած վնասը . սակայն փղապաններուն մէջը մեծ վիճաբանութիւն ու կուռ ծագեցաւ : Եւ երջապէս տկար կենդանին պատահութեան մը սպասելով , երբոր մէկալը հորին բերանը քովանց կայնէր էր , քսնի մը քայլ հտ քաշվեցաւ ամենեւին կարծիք մը չի տալով . ու ետքը բոլոր իր զօրութիւնովը յառաջ վաղեց՝ ու գլուխը միւսին փորին զարնելով հըրեց՝ հորին մէջը ձգեց ահիկա :

Հորին մէջի ջուրին երեսը գետինէն քսան ոտքի չափ խորունկ ըլլալով՝ փիղը դիւրութեամբ հանելու հնարք մը չէր երեւար , գոնէ առանց վնասելու կենդանիին : Հորին մէջը ջուրն ալ որ շատ խորունկ էր՝ սկսեց փիղը անոր երեսը դիւրութեամբ լողալ . ու շատ հաճութիւն զգալով իր զովագին առանձնութենէն , ամենեւին կամք մը չի ցուցուց թէ ինչ Զանք ինչ հնարք բանեցունելով աղատութիւն կրնար ստանալ անկէջ : Բանակին մէջը կապոյ կապոյ փատեր կային՝ որ պաշարման ժամանակը զինւորները զանազան բաներու կըդորձածէին . ուստի փղապանը խորհեցաւ որ ան փատերէն շատ մը հորին մէջը իջեցունելով իրարու վրայ լատի պէս դիպէ , որ մինչև հորին բերանը կրնար ելլալ , թէ որ կարելի ըլլար փիղը վարժել , որ անոնք կանոնաւոր իրարու վրայ իր ոտքին տակը դնէ : Հիմայ հարկ էր , որ փղապանը աս դասը սորվեցունէ փիղին : շերկընցունենք , աս մարդոյր փիղերուն վրայ ունեցած սքանչելի իշխանութիւնովը շուտով կրցաւ սորվեցունել . ու փիղը ըսկսեց վար նետլած փատերուն կապոյները յաջորդաբար իր ոտքին տակը տեղաւորել , մինչև քիչ ժամանակին մէջը կրցաւ անոնց վրայ կայնիլ : Եւ միջոցիս խորամանկ կենդանին տաքէն ու քիչ մը առաջ ջուրի համար քաշած նեղութենէն ազաւտած ըլլալով և իր զովագին վիճակին վայելչութիւնը ձգել չուղեւով , ալ դորձել չէր ուղեր . և իր տէրջը բոլոր սպառնալիքները չէին կրնար յորդորել զինքը՝ մէկ կապոյ մը փատ ալ իր ոտքին տակը դրնել : Մարդը անոր հնարքին դէմը հնարք



ՓԻՂ

ՖԻԼ

բանեցունելով՝ սկըսեց անուշ խօսքերով փայփայել ու գովել փիղը . և ինչ որ կարող չէր սպառնալիքով ընել, կարողացաւ ընել՝ առատ օղի տալ իրեն խոտտանալով : Բսկէց համոզվելով կենդանին նորէն սկըսեց գործել, ու խել մը բարձրըցուց ինքզինքը, մինչև որ հորին բերանի գետինը քիչ մը բանալով կարողացաւ դուրս ելլալ :

Ասգղիացի գեսպան մը որ Գոչինչին զընաց, երևելի տեսարան մը կը պատմէ, որ Չինացիք իրեն ցուցըցեր են՝ իբրև մէկ մասը իրենց բրած զանազան մեծարանքներուն . առիկա պատերազմի մը պատմութիւն է՝ որ փիղերը վագրի մը հետ ըրեր են :

«Խուռն բազմութիւն մարդոց մէկտեղ հաւքեցան առ տեսարանը զննելու . գետինը ցից մը ցցեր էին՝ ու վագրը իր մէջքէն անոր կապեր էին չըւանում, որուն երկայնութիւնը քառսուն կանգունի չափ էր : Գժբաղդ կենդանիին բերանը կարած էր, և ըղունգները՝ քաջած . ինքը խիստ մեծ էր՝ ու արագ շարժող : Եւման քառսունըվեց փիղ ամէնը արու և խոշոր՝ կարգաւ դուրս քաշեցին : Վագրին վրայ թող տալու մէկ փիղ մը կը բերվէր մէկ անգամին : Եւսջին փիղը առեան երաւ մեծ քաջութիւն ցուցընելով բոլոր տեսնողներուն . ու կը կարծէինք իր անվախ դէմքէն՝ որ մէկ վայրկեանին մէջը իր թշնամիին կեանքը պիտի վերցունէ : Եւսջին ջանք ընելուն առանց յայտնի դժուարութիւն մը կը կրէր ահառանքովը վերցուց վագրը՝ ու քսան ոտքի չափ հեռուն նետեց : Վագրը իր ուժը նորէն ժողվելով՝ վագրեց փիղին կնճիթին ու գլխուն վրայ ցաթկեց՝ շնորհ անտեղը ուր որ փղապետը կը կայնէր : Փիղը սատանելով ետ դարձաւ՝ ու սկըսեց փախչիլ . դադանն ալ ետեւէն ինկաւ՝ որչափ որ չըւանին երկայնութիւնը թող կուտար իրեն հեռուն երթալ : Փախստական փիղը թէպէտ վընասած չէր, բայց խիստ խղճալի կերպերով ձայն հանեց, ու ալ չի կրցան նորէն ետ դարձունել անիկա պատերազմի : Բսկէց քիչ մը ետքը տեսանք որ՝ երկու մարդ չըւաններով կապած մէկ մարդ մը քաշեցին բերին վեր կառավարին առջևը . տարիկա

փախչող փիղին փղապանն էր . և հրաման եղաւ՝ որ անտեղը հարկը բեր զարնով անոր : Ուստի երեսին վրայ գետինը զարկին մարդը, ու իր վիզին և ուսերուն վրայ մարդ մը նստաւ, (առիկա հասարակ պատիժ մըն է Չինացոց մէջ .) ու իրարու ետեւէ ծեծ զարնող դահիճները կը փոխվէին : Արբոր լմնեցաւ՝ երկու մարդ մէկը ոտքերէն ու մէկը գլխէն բռնած մէկ դիտարին դժբաղդ մարդը, որ բոլորովին անզգայ կը թըւէր : Արբոր առ անողորմ պատիժը ան մարդուն կը տրվէր, կառավարը բոլորովին անհոգութեամբ վագրին ու փիղին մենամարտութիւնը տեսնալով կը զըւարձանար, որպէս թէ բնաւ ուրիշ բան մը չէր ըլլար իր ան միջոցին :

Տար կամ տասներկու փիղ իրարու ետեւէ բերվեցան վագրին վրայ յարձակելու . և վերջապէս վագրը փիղերուն ահառանքովը զարնովէն շատ անգամ գետինը իյնալովը սատկեցաւ :

Աս փիղերուն ունեցած անհնարին ուժը այնչափ էվել էր՝ որ մէկ բանի մը վրայ ըլլալ չէի կարծեր : Եւսնոցմէ ունիք մինչև երսուն ոտնաչափ հեռուն նետեցին վագրը, երբոր կարողութիւնը հասած մեւնելու վրայ էր՝ ու ալ չէր կրնար դէմ դնել անոնց : Օտրհուրելով կը լսէինք՝ երբոր կը պատմէին թէ, ասոնք ան փիղերն էին՝ որ շատ տարվոնէ հետէ օրէնքին վճիռը կը կատարէին մեւնելու համար դատապարտուած անհամար չարագործներուն վրայ : Եսանկ դիպուածներու մէջ՝ վերը պատմըված կերպովը անգամ մը գետինը զարնելը բաւական էր մէկուն մահը պատճառել :

Գլխի :

Եւսջին Վ պիտանի բան է դրամը . թէ որ դրամ ըսված բանը չըլլայ նէ՞ մեզի պէտք եղած բաները ինչպէս ձեռք պիտի ձգենք : Օրինակի համար, կօշկակարը՝ որ իր տանը համար հացի ու միսի կարօտ է, անոնց տեղը բան մը չի պիտի կրնայ տալ՝ բայց կօշիկ : Հայագործին խանութը պիտի երթայ՝ ու զոյգ մը կօշիկ պիտի տայ անոր, անոնց տրժողութեանը չափ հաց առ

նելու . ու մնալաճառին ալ պիտի երթայ նոյնը ընէ՝ միւս առնելու համար :

Բայց կարելի է թէ ան օրը հացագործը կօշիկիկարօտութիւն չունի , հապա գլխարկ մը պէտք է իրեն : Աւրեմն կօշիկարը գլխարկ չկնող մը պիտի գտնայ , որ կօշիկի կարօտութիւն ունի , և անկէց գլխարկ մը առնելով պարտի անիկա հացագործին տա նիլ , ու անոր տեղը հաց առնել :

Ասոնց ամէնը մեծ նեղութիւնով կրկա տարվի . բայց դրամը աս նեղութիւններէն մարդը կազաւտէ : Ա՛վ որ դրամ ունի՝ անով իր ուզած բանը երբոր ըլլայ՝ կրնայ ձեռք բերել . հացագործը միշտ պատրաստ է իր հացը ստակի հետ փոխել . ինչու որ զիտէ թէ՛ անիկա տալու ըլլայ նէ՛ կրնայ առնել զոյդ մը կօշիկ կամ գլխարկ մը , կամ իր հացը եփելու համար փառ՝ և կամ ինչ և իցէ բան , որուն որ կարօտութիւն ունի : Մարդիկ արդեօք իրաւ ժամանակ կրկոր սընցունէին , և իրաւ աշխատութիւն կը քաշէին մէկ բանը ուրիշ բանի մը տեղ փոխելու՝ ստակի գործածութիւնը դառնովէ լին առաջ :

Սուրբ Վերքը մեզ կըզգուշացունէ , որ չափէն էվել չի սիրենք դրամը : Յիմարութիւն ու չարութիւն է՝ սիրտերնիս դրամի կամ ուրիշ բանի մը վրայ դնել աս աշխարհիս մէջ : Ոմանք իրենց սիրտերը կը բռնառնին վրայ կըդնեն , ոմանք աղէկ հագուտի : Եսոնց ամէնը մեր խորհուրդները Նստուծմէ ետ կըդարձունեն . անոր համար Յիսուս Քրիստոս մեր Տէրը կըսէ մեզի՝ թէ , « Լըկնից մէջը դանձեցէք ձեզի համար դանձ . որ անտեղ ոչ . ցեցը ոչալ ժան կը կապահանեն անիկա » . և կարգիլէ մեզի չափադանց հոգեբու ու սրտաշուքի մէջ իյնալ թէ՛ ինչ պիտի ուտենք կամ ինչ պիտի խմենք , կամ ինտոր պիտի հագվինք . հապա կըպատուիրէ որ՝ պիտա առաջ Նստուծոյ Թաղաւորութիւնը և անոր արդարութիւնը խնդրենք :

Սակայն պարտինք չորհուրդալ ըլլալա մէն ան բարիքներուն համար՝ որ Նստուծային նախախնամութիւնը մեզի կըպարզէ և ու նայիլ որ անոնք աղէկ կըբաղով գործածենք : Հարստութեան ամէնէն աղէկ գործածութիւնը , ու ճշմարիտ Քրիստոսն էի

մը սիրտը բերկրեցունող բանը՝ աղքատ մարդիկը իրենց կարօտութենէն ազատելն է :

Աս բանիս համար է դրամին այսչափ պիտանի ըլլալը . ինչու որ աղքատ մարդ մը անանկ բանի մը կըկարօտի , որ ան բանը չունիմ ես անոր տալու : Բայց թէ որ ստակ տամ իրեն՝ անիկա շուտ մը իր ուզած բանին հետ կընայ փոխել ան . եթէ հաց ըլլայ՝ և եթէ հանգերձ , եթէ ածուխ՝ և եթէ զիւրք :

Հրէաստանի մէջ երբոր սատակ սով մը եղաւ Պաւղոս առաքեալին ատենը , Յոյն Քրիստոնեաները յարմար դատեցան հին դոնրված աղքատ սուրբերուն (այսինքն Քրիստոնեաներուն) պէտք եղածը հոգալ : Բայց իրենց մեծ նեղութիւն պիտի ըլլար՝ այնչափ հեռու տեղէ ցորեն խրկել անոնց . մանաւանդ թէ կարելի էր՝ որ իրենք ալ բաւական ցորեն չունէին անոնց խրկելու : Ուստի ստակ ժողովեցին՝ որ քիչ տեղ կը բռնէ , ու Պաւղոս Հրէաստան տարաւ անիկա . և ան ստակովը աղքատ ժողովուրդը կըցաւ ցորեն առնել ուր տեղաց որ կարելի էր դանդովիլ :

Փոխանակութիւն :

ԲԱՅՅ ինչո՞ւ համար ամէն մարդ իրեն պէտք եղածը ինքը չի պիտի շնէ , առանց ուրիշին երթալու ծախու առնելու համար :

Գնա՛ կօշիկաւարին՝ ու անոր հարցըր թէ ինչո՞ւ համար ինքը չի շնէր իրեն պէտք եղած սեղանը ու աթոռները , գլխարկը ու վերարկուն , և բոլոր պէտք եղած բանները : Պատասխան կուտայ քեզի թէ , Սէկ աթոռ մը շնէլու համար աստաղծագործին բոլոր գործիքները պիտի ունենայ մարդ , որոնցմով հարկըր աթոռ կրնայ շնովիլ : Աւ թէ որ ան գործիքները և աթոռին զաներն ալ ինքը շնէլու ըլլայ , դարբինի գործիքներ ալ պէտք է ունենալ : Լա ամէն ասոնք ունենալէն ետե մեծ աշխատութիւն պիտի ըլլայ իրեն անձունի աթոռներ ու սեղաններ շնէլը , որովհետեւ ան արհեստին մէ

Փոխանակութիւն . Լաւնիս : — Նստաղծագործ . արդաւաճը : — Գործիք . Էնկէլ , աստաղծալ : — Դարբին , շնէլիլ :

Ջը չի վարժարկեցաւ : Եւ վերջոք դիւրին է իւրեն կօշիկ շինել : ու տասներկու աթոռ առնելու չափ անոնցմէ ծախել ու իր բանը լմնացունել : քան թէ մէկ աթոռ մը ինքիւրէն շինել : Գարձեալ՝ ատաղձադործին մեծ աշխատութիւն՝ և ատեն կորսնցուցնել պիտի ըլլայ՝ իրեն համար կօշիկ շինելը : Դասակ է նաև դերձակին՝ դիւարկ շինողին՝ և ուրիշ ամէն արհեստաւորներուն : Ըմէնէն առէկ ճամբան ան է՝ որ ամէն մարդ իր արհեստը բանի՝ և ուրիշին պակասութիւնը լեցունէ : երբոր ուրիշներն ալ իր պակասութիւնը կը լեցունեն :

Բայց քանի մը վայրենի ազգեր կան՝ որ իրենց մէջը հազիւ թէ աս կերպը փոխանակութիւն կը ըլլայ : Ըմէն մարդ իր պզտի խրճիթը ինքը կը շինէ : նմանապէս իր հանդերձը, ու ծառին բունէն փորած նաւակ մը ձկնորսութեան երթալու անով, և ձուկ բռնելու կարթը՝ ու նիզակը, նետը ու աղեղը որսորդութեան համար :

Եւ կերպ ժողովուրդը մեր մէջը գտնուած աղքատներէն ալ գէշ են : Իրենց հաշուաւոր ուրիշ բան չէ՝ բայց հաստը խաիր, կամ կենդանիներու մորթ . իրենց խըրճիթները խողերուն գոմէն աղէկ չեն . նաւակներնին փորած փայտի մը կտոր է : ու ամէն բաներնին անձուռնի :

Ուր որ ամէն մարդ իրեն պէտք եղած ամէն բանը կը շինէ : ամէն բան գէշ կը շինվի . ու աս բարբարոսներէն թէ որ քանի մը հարկը հողի գեղի մը մէջ ըլլան : անթոռութենէ կիսամեռ կը մնան . ուր որ մեզմէ հազարաւոր հողի շատ դիւրութեամբ կրնային ապրիլ :

Բարացած գոմէշ մը :

ԲԱՉ տարիներ առաջ Գալիֆօրնիայի քանի մը որսորդները Բմերիդոյի աբեմոնեան ծովեզերքներուն վրայ գոմէշ մը գտան քարացած . բայց անանկ կատարեալ վիճակի մէջ՝ ինչպէս որ իր կենդանութեան ատենը էր : միայն թէ մէկ կողմը կոր նշան մը կար չորս մատի չափ տրամագիծով՝ որուն բոլորաւոր մաշեր էին : որպէս թէ

Կարթ . օլլայ : — Նիզակ . իլլաթ : — Նետ . օգ : — Նղեղ . էայ : — Գոմէշ . իմնաթ :

եղկար ժամանակ անոր վրայ ջուրի առումը վաղելով մաշեցուցած էր ան տեղը : Եւ սիկա մէկ դետի մը քովը գտնուէր էր : որուն ջուրը՝ կըսվի թէ : անանկ զօրութիւն մը ունի՝ որ կը քարացունէ կենդանիները ու բուսական բաները : որ իր եզերքներուն վրայ խիստ առատութեամբ կը գտնուին աս վիճակին մէջը :

Բարացած գոմէշին մարմնին շատ կողմերը մաղերը յայտնի կերեային : ու եղջուրները՝ աչքերը՝ քիթը՝ բերանը՝ ու ոտքերը իրենց սեպհական կատարեալ վիճակին մէջն էին :

Պատերազմ կրակին ու ջուրին մէջ :

ԵՎԻՊՏՈՍԻ հին քուրմերը՝ Նեղոս գետը կը պաշտէին : բայց Պարսից քուրմերը կրակը կը պաշտէին : Կըսվի թէ՝ ատենօք աս երկու ազգին քուրմերը խօսք կրնեն իրարու հետ՝ որ իրենց աստուածներուն՝ այսինքն կրակին ու ջուրին մէջը պատեղազմ մը բայցի : ու տեսնան թէ՝ ո՞րը աւելի զօրութեան տէր է :

Ուստի Պարսից քուրմերը մէկ մեծ կրակ մը կը վառեն : ու Եգիպտոսի քուրմերը՝ Նեղոս գետին ջուրէն մեծ աման մը ջուր կը դնեն անոր դէմը : Սակայն վարպետութեամբ ամանին քովերը ծակեր կը բանան : ու անոնք մոմով կը գոցեն . և երբ բոլոր բաժ կրակը կըսկըսէ մոմերը հալեցունել : ջուրը ամանէն դուրս կը ցաթկէ կրակին վրայ : ու շուտ մը իր թշնամին կը պաղթէ մարելով անիկա :

ԼՆԵԱ Թագուհին՝ Լնգղիայի առաջին Կարողութեամբ Թագաւորին ազդիկը (որ մեռաւ Գեկտեմբերի 8ին, 1640,) երբոր իր մահուն անկողինին վրայ պառկած՝ և իր զօրութիւնը գրեթէ բոլորովն հատած էր : մէկ օրիորդի մը՝ որ իրեն ըսաւ թէ աղօթք ընէ : աս պատասխանը տրւաւ : « Ես կարողութիւն չունիմ իմ երկան աղօթքս ընելու : այսինքն՝ Տէրունական Բոթթը . հապա իմ կարճ աղօթքս պիտի ըսեմ » : « Եղիս տուր ո՞վ Տէր՝ իմ աչքերուս : որ մահուան քունը չի քնանամ » : Եւ փոքրիկ հիւանդը՝ որ դեռ ըման չորս տարու չէր : լմնացուցածին պէս աս խօսքը՝ հողին աւանդեց :

ՍԵՐՈՒ ՓԵՆԵՐԵՐԻՆ՝

ԻՆՏԵԼԵԿՏԱԿԱՆ զԵՆՈՒՄԻՆ ԿԱՄԱՐԱԿՈՐԵՆ ԿՐՈՒՄԻՆ ԲԱՆԱԿԱՅԻ ԹԱԳԱԼՈՐ ԵՐԿՐՈՐԴ ՓՐԵՂԵՐԻԿՈՒՆ ՎՐԱՅ՝ ՈՐ ՀԱՍԱՐԱԿՈՐԵՆ ԿՐՈՒՄԻՆ ՍԵՐՈՒ ՓՐԵՂԵՐԻԿՈՒՄ, ԱՆ ԽՆՔՆԱԿԱԼԻՆ ՎԱՐՔԻՆ ՄԵՋԷՆ ԱՈՆՆՐՎԱԾ Է:

ՓՐԵՂԵՐԻԿՈՒՆ ՍԵՐՈՒՄԻՆ ՄԵՋԷՆ ԸՐԱԾ ՃԱՄԵՐՈՐԴՈՒԹԻՆՆԵՐՈՒՆ ԱՅԿ ԱՆՊԱՄԻՆ՝ ՊԵՆ ԴԱՅԻՆ ՄԵ ԿՆԻԿ ԱՎԱԼՈՒ ՄԵ ԱՊԱՆՈՂ ԻՐԵՆ ԸՆԾԱՅ ԸՐԱՆ, ՈՒ ԹԱԳԱԼՈՐԻՆ ԱՊԱՆՈՂ ԸՆ ԴՈՒՆԱԾ ԺԱՄԱՆԱԿԸ ԳՈՆԵՐԳԱԾ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԻԱՄԵՐ ԱՆԱՆԿ ԱՐՈՒՄԱԼՈՐԵՑԱԼ ԿԻՆՐ, ՈՐ ՄԻՍՔԸ ԴՐԱԼ ԹԷ՝ ՀԵՏԼԵՆԱԼ ԽԱՐԻՆ ԱԼ ՓՈՅՈՒՄԱՄ ԻՐ ԵՂԱԾ ԱՆՈՐ ԸՆԾԱՅ ԽՐԿԷ՝ ԲԱՆԱԿ ՄԻՆԱ ՄԱՐԻՆ ԿՆԻԿ ԻՐ ԸՆԾԱՅԻՆ ՀԵՄՐ ԱՍ ՀԵՏԼԵՆԱԼ ՊԵՐԸ ԽՐԿԵՅ:

“ՎԵՆԱՍԻՐԵՐԻ ԵՎ ԱՄԵՆԱՐԱՐԾՐ ԹԱԳԱԼՈՐ”

ՏԵՐ ՄԵՐ:

ՈՐՈՎՏԵՆԱԼ ԱՍ ՄԱՐԻ ՄԵՐ ԱՊԱՆՈՂ ԱՆԳԱԾ ՄԱՐՎԱՆ ԱՅԻՆ ԱՊԷԿ ԶԵՂԱԼ, ԱՊԱՐՄԻՔ ՂԵՐԱՆԻԼ ԱՆԻԿԱ ԵՂԱԾԻՆ ԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ: ԱՍ ՈՒ ԻՄ ԵՐԻԿԱ ԽԻՍՈՒ ԱՊԷԿՆԵՐԸ ՈՐ ԿՐԵՄԻՆ ԳԱՆԵԼ՝ ՔԱՂԵՑԻՆՔ, ՈՒ ԿՐԵՑԱԾՆՈՒՆ ԶԱՓ ԱՎԱՏԱՆԵՑԻՆՔ ԵՎ ԵՐԻԿԱՆՔ: ԱՊԱՆՈՂԱՆ ԹԵ՝ ԱՊԱՆՈՂԱՆ ԿԻՍԻ ԶԱՅԱԿԷՐ ԱՆԻԿԱ: ԱՐԻՆՊԵՐԵՆՔ՝ ՈՐ ԲԱՆԱԿԱԾ ձԵՂԻ ԵՐԿԱՐ ԿԵՆՔ ՉՈՐՀԷ, ՈՐ ԶԱՍՈՒՄԱՐԻՆՆԵՐ ԿԱՐՈՂ ԸՐԱՔ ԳԱՄԼ ԵՎ ԱՆՈՂ ԱՆՍԱՄԼ: ԱՍ՝ ՄԻՇՈՒ ՈՒՆԵՑԱԾԻԱ ԽԻՍՈՒ ԱՊԱՆՈՂԱՆ ԶԵՂԻ ՀԱՄԱՐ ԱՊԻՍԻ ԱՎԱՏԵՆԻՄ: ՈՒՄՈՒՆ ԵՆ ՈՒ ԻՄ ԵՐԻԿԱ ԿԱՂԱՅԻՆՔ ձԵՐ ԱՆԵՐՈՒԹԵԱՆՐ՝ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԻԱՄԸ ՆԱՅԻԼ ՄԵՐ ՎՐԱՅ՝ ՄԱՆԱԼԱՆՈՐ ՈՐ ՄԵՐ ՓՈՐՔՐԻԿ ԳԵՏԻՆՐ ԱՍ ՄԱՐԻՆՔԻՅ ԱՊԱՂԱՐԵՆԵՑ, ԵՎ ՈՐ ԺԱՆՐ ԱՐԱՐՈՒՄ ԽԱԿԻՆԿԱՆՔ ԱՆ ԱՎԱՏԱՆԱԼ՝ ՈՒ ԱՆԻԿԱ ԳՐԱՐ ԴՐԻՆՔ: ՎԵՆԱԿԱՐՈՂ ԲԱՆԱԿԱԾՈՅ ԱՎԱՏԱՆՈՒԹԵԱՆՐ ԿՐԱՆԱՆՆԵՐ ձԵՂ, ԵՎ ԵՆՔ ՄԻՆԵԼ ԻՄԱՏ՝ ԵՎ ԵՎԱՆԱՆ ձԵՐ ԱՆԵՐՈՒԹԵԱՆՐ

ՀԱՆԱՄԱՐԻՄ՝ ՈՒ ԱՆՃԱՆԱՊԱՐ ՀԱՄԱՄԱՆԻՆՐ,

ԵՎ ԻՄ ԻՐԵՆ՝

ՓՐԵՂԵՐԻԿՈՒՄ ԱՍ ՆԱՄԱԿԻԱ ԱՎԱՏԱՍԽԱՆՐ ԱՍԱՆԿ ԴՐԵՅ:

“ԱՎԱՏԱՍԽԱՆ ԴԱՐԻԿ:

ՀԱՍՈՒ ՉՈՐՀԱԿԱԼ ԻՄ ձԵՂԻՆ ձԵՐ ԸՆԱ ԱՊԱՆՈՂՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ: ԹԷ ՈՐ ԲԱՆԱԿԱԾ ԿԵՆՔ ՈՒ ԱՊԱՆՈՂԱՆ ԶՈՐԴՈՒԹԻՆ ԶՈՐԴՆԷ ՆԷ ԽՆԾԻ, ՄԱՐԻՆ ՄԵ ԵՏԼԵ ԱՊԻՍԻ ԳԱՄ՝ ՈՒ ձԵՂ ԱՆՍԱՄ՝. ԽՆԾԻ ՀԱՄԱՐ ՔԻՅ ՄԵՐԱՆ ԱՎԱՏ՝ ՈՐ ձԵՂԻ ԵԿԱԾ ԱՆՍԱՄ ԳԱՆԱՄ՝ ԱՆԻԿԱ: ԲԱՅԵՑ ԱՆ ՈՐ ԽՆԾԻ ՂՈՒՆԵՑԻՐ ձԵՐ ԱՐՈՐ ԳՐԱՐ ԴՆԵՐՈՒՂ ՎՐԱՅ ԺԱՆՐ ԱՐԱՐՈՒՄ ՀԱՄԱՐ, ԽՐԱՆԵՐԵՆ ԳԷՅ ԸՆԱ ՄԻՆ Է. ԱՊԵՐԷՐ ՈՐ ԽԻՍՈՒ ԶԱՄԱՆ:

ՎԱՐԱՅՐ ԵՎ ԻՐԵՆ:

ՎԱՐԱՅՐ ԸՐԱՅԻՔ, ԷՆ ՆԷ ձԵՐ ԳՈՐԾԵՐՐ ԵՍՏԱՅԱՆԱՐՈՒՆ ԱՆՈՐ ԵՍ ԵՍ ԿԵՐԹԱՆ: ԲԱ ՆԱՄԱԿԱԿՈՐՈՒՄ 250 ԳԱՐԵՐ ԿՐԵՐԵԻՄ ձԵՂԻ ՈՐ ԵՍ ԱԼ ձԵՂԻ ԱՅԻՆ ԿՐԵՑԱԾԻԱ ԶԱՓ ԱՎԱՏԱՆԵՑԻ ԱՆՈՒՔ: ԲԱՆՈՎ ձԵՐ ԱՐԱՐՔԸ ՎՃԱՐԵՑԷՔ, ՈՒ ձԵՐ ՓՈՐՔՐԻԿ ԳԵՏԻՆՐ ԱՎԱՏԱՆԵՑԷՔ: ԱՊԱՆԵՑԷՔ՝ ՈՐ ԶԱՓԱԼՈՐ ԸՐԱՔ, ՈՐ ԶԱՓ ՈՐ ԿՐԵՆԱՐ: ԲԱՐԿԱ ԱՅԿ ԽՐԱՍՈՒՄԻՆ Է՝ ՈՐ ԵՍ ձԵՂԻ ԿՐԱՎԱՏԱՆԻՐԵՄ՝ ԻՐԵՆ ձԵՐ ՍԻՐԵԼԻ ԹԱԳԱԼՈՐ,

ՓԵՆԵՐԵՐԻՆ՝

ՆՊԵՆԱՐ ԵՎ ԻՐ ԵՐԱՅ:

ԿՐՈՒՄԱՆ՝ ՁԵՆԱԼՈՐ ՄԵՐ ՎԱՐԻՍԱՌՆԵՆԱԼ ԹԵԱՆ ԱՆՈՂԻ ՊԱՐԵՐՈՒՆ ԱՅՋՐ ՎԵՐԻՆ ԵՎ ՊԵՐՈՒՄ ՊԱՅԵՐ՝ ՈՒ ՀՈՆ ԸՆԱԿԵՐ Է ԿՐԱՎԻ ՔԱՐԱՅԻՐԻ ՄԵ ԱՅՋ, ՈՐՆՈՐ ՓԱՐԱԼՈՒՆԻ ԺԱՄԱՆԱԿԸ ՄՈՒՄԱՆԵՐՈՒՆ ԱՎԱՏԱՐԱՆՐ ԵՂԵՐ Է: ԲԱ ՁԵՆԱԼՈՐՐ ԱՆՍՈՒՂՐ ԱՊՈՒԹՔ ԿՐԵՆԷ ԵՂԵՐ ԱՆԱՐՎԱՆՑ՝ ԿԵՍՈՐԻՆ՝ ՈՒ ԻՐԻԿՎԱՆ, ՈՒՄԵԼՈՎ ՄԻԱՅՆ ՄՈՒՐ ԴՈՒՆՐՎԱԾ ԱՐԱՄԱԼԵՆԻՆԵՐՈՒՆ ԱՊԱՆՈՂԵՆ, ՈՒ ԽԱՄԵԼՈՎ ԱՆՈՐ ՊԵՐՈՒ ՎԵՐԻՆ: ՎԵՐՋՐ ՁԵՆԱԼՈՐՐ ԻՐ ԿԵԱՆՔԵՆ ՃԱՆՃՐԱՅԵՐ Է, ՈՒ ԱԿՐԱՆԵՐ Է ԵՎԵԼՈՐ ՋԵՐ՝ ՄԵՆԱՆՈՒԹԻԱՄԸ ԱՊՈՒԹՔ ԸՆԵԼՈՒ:

ԱՅԿԵՅ ԵՍՔԸ ԱՅԿ ՕՐ ՄԵ ՔԱՅԱԾ ԱՌԽՆՐ ԵՐԱՊԵՆ ԱՅՋՐ ՀՐԵՇՈՒԱԿ ՄԵ ԿՐԱՆԵՐՎԻ ԻՐԵՆ՝ ՈՒ ՀՐԱՄԱՆ ԿՐԵՆԷ ՈՐ ԵՐԱՅ՝ ՈՒ ՔԱՐԱՅՐԻՆ ՔՈՎՐ ԵՂԱԾ ԱՐԱՄԱԼԵՆԻՆԵՐՈՒՆ ԱՅԿ ԺԱՆՐ ԿՈՐԷ, ԵՎ ԱՆՈՐ ԱՆԵՐԵՆԵՐՈՎ ԶՐԱՆ ՄԵ ՋԵՆԷ. ՈՒ ԿՐԻՍՏԱՄԱՆԱՅ ՀՐԵՇՈՒԱԿՐ՝ ՈՐ ԶՐԱՆՐ ԸՐՆԱԿԵՆ ԵՏԼԵ ԽՆՔՐ ՆՈՐԵՆ ԱՊԻՍԻ ԵՐԱՅ ԻՐԵՆ: ՁԵՆԱԼՈՐՐ ՔՈՒՆԷՆ ԿԱՐԹԵՆՆԱՅ՝ ՈՒ ԱՅԿԵՆ՝ ԻՄ ԱՅԿ ԱՆՍԱԾ ԵՐԱՊԵՆ ՀՆԱՊԱՆՈՒԹԻՆ ԽՆՔՐՈՒՆՔՐ ԳՈՐԾԻ ԿՈՒՄՈՅ:

ՀԱՄԱՐԱՅ ԿԵՐԱՅ՝ ՕՐԵՐՈՎ ԶՈՐԱ ՊԵՆ ԿԵՐԱՅ՝ ԱՅԿ ԱՆՈՂԵՆ ԱՅԿԱԼ ԱՆՈՐ ԵՐԹԱՅԻՄ՝ ԿԱՅԻՆ ԴՈՒՆԱԿՈՒ ՀԱՄԱՐ: ԱՆ ԻՐ ՃԱՄԵՐՈՐԴՈՒԹԵԱՆՐ ԱՅՋ ԱՆԱՆԿ ՍԻՐՈՐ ԿՐԵՐԱՅՎԻՆ ՈՒ ԵՐՋԱՆԻՈՒԹԻՆ ՄԵ ԿՐԵՐԱՅ, ՈՐ ԶԱՍՈՒՄԱՐԻՆՆԵՐԻՆ՝ ԻՄ ՎԵՐ ԶԵՐ ՊԱՅԵՐ: ՀԻՄԱՅ ԻՐ ԱՊՈՒԹՔՆԵՐԸ ԿՐԱԿՐՈՒՆ ԿԱՐՃՐՆԱԼ ՈՒ ՔԻՅՆԱԼ. ԵՎ ԹԵԱՅԻՄ ԿԱՐՃՈՒ ՔԻՅ ԷՐԻՆ՝ ԱՆՈՒՆՔՐԱՅԵՑ ԱՆԱԼԵԼ ՋԵՐԱՆԱՆՈՒԹԻԱՄԸ:

ԻՆԵ ԵՎ ԻՐԵՆ ԿԱՅԻՆ ՄԵ ԿՐԱՊԱՆԱՅ՝ ՈՒ ԿՐԱՆԱՅ ԿՐԿԱՐԷ ԺԱՆՐ, ԵՎ ԶԱՍՈՒՄԱՐ ԱՂԱՄԱՆԵԼՈՎ ՈՒ ՋԱՆԱԿՈՎ՝ ԱՆԵՐԵՆԵՐԸ ԿՐԱՎԱՐԱՍՈՒՆ ԶՐԱՆ ՋԵՆԵԼՈՒ. ՈՒ ՔԱՆԻՄ ԵՐ

ՎԱՐԱՅՐ, ԶԱՊԱՐՈՅ: — ԱՅԿԵՆ, ԱՊԱՆՈՂԱՅ:

շաբաթ շարունակ աշխատելով հրեշտակին հրամանը կրկնապես :

Ընդհանրապես որ խոստացվել էր , նորէն իրեն կրտսերով տեսիլքը՝ ու ասանկ կրտսէ . և Դուն քու կեանքէդ ալ ծանծրութիւն չունիս հիմայ . հապա ուրախ ու երջանիկ ես : Ուրեմն գիտցիր՝ որ աշխատութեան համար ստեղծվել է մարդ . և աղօթքն ալ իրեն պարտքն է . երկուքն ալ հարկաւոր են իր աղէկ ըլլալուն համար : Վաղը աւատու ելիր , ու շնորհ չըւանդի մէջդ կապէ , ու մտիւր աշխարհի մէջ . և քու մտացդ մէջ ըլլայ միշտ , թէ Եստուած ինչ կըխնդրէ մարդէն , թէ որ մարդս կուզէ ուրախ սրբութիւն ու երջանկութեամբ ապրիլ երկրի վրայ” :

Հարգող-Լեւոն Գեօրգիւն-Նաչի :

ՄՏՄՏՏՏ. Թէ դուն ինչ էիր առաջ . Ոչինչ : Ընկէց ետքը շատ տարիներ ինչ էիր . Տկար ստեղծուած մը : Բոլոր քու կեանքիդ մէջը ինչ էիր . Մեծ մեղաւոր մը : Քու բոլոր գերազանցութիւններդ մէջ ինչ էիր . Միայն մէկ պարտք կան մը Եստուծոյ , քու ծնողացդ , երկրիս ու բոլոր ստեղծուածներուն : Բայց թէ որ ուզենք՝ կրնանք Պրատոնական փիլիսոփաներուն կանոնը գործածել . որոնք խոնարհութեան գլխաւոր պատճառները՝ որ մենք մեր անձին կրնանք հանել , աս եօթը գլխաւոր խօսքերուն մէջը բովանդակեցին :

1 . Սարդուս հոգին անհաստատ է ու ապստամբ :

2 . Իր մարմինը անասունի մարմին է ու հիւանդոտ :

3 . Միշտ հաստատուն կրկենայ իր յիմարական բաներուն ու սխալմունքներուն մէջ , և անհաստատ իր վարքին ու բարի դիտաւորութիւններուն մէջ :

4 . Իր աշխատութիւնները դատարկ են , խառնիխուռն ու առանց վախճանի :

5 . Իր բաղդը փոփոխական , քիչանգամ հաճելի , բայց միշտ անկատար :

6 . Իր իմաստութիւնը մեռնելու տոներ կուգայ , այսինքն՝ անիկա գործածելու ատենը անցնելէն ետքը :

7 . Իր մահը՝ ստոյգ , միշտ դրանք քովը պատրաստ , ու ոչ բնաւ հեռուն :

Թէ որ ասոնց՝ կամ ասոնց նման մըտածութիւններու մէջ ըլլանք միշտ կամ շատ անգամ , ուրիշ բան չի պիտի տեսնանք որ այնչափ յարմար է մեզի՝ քան խոնարհ ըլլալը , ոչ ալ ուրիշ բան մը պիտի տեսնանք այնչափ յիմարական՝ որչափ հպարտ ըլլալը :

Կանոն-աբլը նման-լայ :

ԼՐԵՂԱՅԻՐ իր շարունակ ընթացքին մէջ հետզհետէ կարթնցունէ Քրիստոսնեաները՝ աղօթքի ու Եստուծոյ փառաբանութիւն տալու պարտաւորութիւննին կատարելու : Լա այսպէս եկեղեցական պաշտամանց սուրբ կրակը չի մարկր : Երբոր հոգնութիւնը ու քունը աշխարհի մէկ մասին մէջը Եստուծոյ պաշտօնեաներուն աջքը կըգոցէ , նոյն ժամուն ուրիշները զօրացած ու քաջալերած կարթննան կելան , երկնաւոր սպասաւորութիւն մը սկըսելու՝ և իրենց կարգով հրեշտակաց ու կատարեալ արդարոց հոգիներուն անգաղար երկիրպագութեանը հետ միաբանելու : Ըն Քրիստոսնեան՝ որ օրվան ամէնէն աղէկ ժամերը իր անկողնին մէջը կանցունէ , թող մոմըտայ թէ երբոր ինքը ասանկ ծուլութեան մէջ է , ուրիշները Եստուծոյ փառաբանութիւնը կըհուշակենկոր , և Քրիստոսի եկեղեցիին ու բոլոր մարդկային աղջին համար իրենց աղօթքը վեր դէպ՝ ի երկինքը կըխրկենկոր : Ո՞վ ուրեմն կուզէ՝ որ աս երկնաւոր գործին մէջը վերջին գրտնրվի . ո՞վ իր ծուլութիւնը կըշարունակէ ու ժամանակ անկողնի մէջը մնալով , երբոր իր քովի տանը դրացին կարելի է թէ՛ ծունկին վրայ ինկած աղօթք կընէկոր : Լա նոյն Լըկնաւոր Հայրը՝ որ ան վատ մարդուն ծուլութիւնը կրտեսնայ , մէկալ ժրաջանին ալ աղօթքը կըլսէ :

Չո- Խո :

ՓԵՏԻ դէղի մը մէջ մէկ ծուլ փատ մը գտնովի նէ՝ բոլոր դէղը անհաստատ ընելու բաւական է ան . և թէ որ երկու կամ իրեք ծուլ փատեր մէյտեղ գտնովին , չէս կրնար իրարու քով յարմարել անոնք՝ հարկաւ վար պիտի գլտորին : Ուրիշ բան

մը այնչափ աշխատութիւն չի պատճառեր
փատ շարողին՝ որչափ աս ծուռ փատերը :
Ո՛վ կրնայ տանիլ անոնք :

Բնկերութեան մէջ կը գտնուին անանկ
անձինք՝ որոնք պակսութիւն կը գտնան ա-
մէն բանի մէջ, որ անկէա իրենք չի հնա-
րեցին : Ղեն կրնար միաբանութեամբ ա-
ռաջ երթալ՝ և մէկ աղէկ գործ մը առաջ
տանիլ, ինչու որ բան մը կայ՝ որ իրենց
ուղածին պէս չըլար : Մինչև որ ամէն բա-
ները իրենք իրենց ուղած ճամբովը չի կար-
գադրեն՝ բան մը չեն կատարեր, հապա
միշտ ու հանապազ կը տրանջան ու կը քրթ-
մընչեն : Բոնք անհանգիստ եղբայրներ են,
չես կրնար հետեւնին մէկ գործ մը գոր-
ծել, ծուռ փատեր են, չես կրնար անոնք
բանի մը հետ միաբանել :

Լսանի մարդիկները բարոյական հի-
ւանդութիւն մը ունին. որ եթէ վտանգա-
ւոր չէ ալ հէ, շատ նեղացուցիչ է :

Լսախտին սկիզբը փնտռել ու դանալը
դժուարին է. բայց կը կարծենք թէ բուն
ախտը կը պատճառի անձնասիրութեան
նախանձութեան՝ ինքնահաւանութեան՝
բարձրամտութեան ու ժանտութեան հո-
տած թարախներէն : Չիտենք թէ ճիշդ
ինչ անունով կանչուլ ենք աս ախտը,
բայց գուցէ Տրանջալու Սեւամաղձոտու-
թիւնը ըսենք նէ՝ չենք սխալեր : Ուստի աս
հիւանդութեանը մէկ դեղ մը գրել կը հա-
մարձակինք :

- Լ. 3 ցորեն խոնարհութիւն :
2 կուա Հեգութիւն :
3 ունկի Վթութիւն :
2 տրամ Լոյսապրական սէր :
3 ունկի Համբարութիւն :

Բոնք մէյտեղ խառնէ 100 տրամ Սարգասիրու-
թեան կաթով :

Լսաբարդութիւնը պատրաստ գանը
վելու է հիւանդին քովը. և երբ տրանջա-
լու նշաններ կ'երևան՝ խմելու է անիկա :
Թէ որ բորբոքը շատնայ՝ բարդադութեան
չափը և ուժը էվելցուր. ու քիչ մըն ալ
Վիտութիւն Բնձին խառնէ անոնց հետը :

Թէ որ կուգես գիտնալ մէկ ոսկին յարգը,
գնա օտարէն փոխ ուղէ ոսկի մը :

Սեւամաղձոտութիւն. գարս սէղար :

Երկաւոր գէտընն :

Լեթաւոս փիլիսոփայ մը աշխարհիս
բաներուն վրայ սէր ունենալուն յիմա-
րութիւնը անանկ մը կը նկարագրէ, որ մէկ
Վրիստոնեայ մը գրեթէ անկէց ազդու չէր
կրնար նկարագրել : «Ղուն մէկ ծովային
ճանապարհորդ մըն էս՝ կըսէ, ու քու նազ
նաւահանգիստի մը մէջ քանի մը ժամ կե-
ցաւ : Գնդերուն մակընթացութիւնը ու
հոլը յաջողակ են, ու նաւապետը քեզ կը
կանչէ կոր ճամբայ ելլալու. բայց դուն ին-
քըզինքդ կը դաւարձացունեսկոր խեղինքը
ու մանտրտիկ քարեր ժողվելով ծովե-
ղերքը, մինչև որ առանց քեզի ճամբայ
ելլան» : Բանի է ամէն Վրիստոնեայ, որ
ան երջանիկ յաւիտենականութեանը եր-
թալու ճամբուն մէջը կուշանայ և ժամա-
վաճառ կը լայ, կը մոմբտայ և գործերով
կը զբաղի, որպէս թէ յաւիտեն հոս պիտի
ապրէր :

Երբոր մեր ըրած բարեգործութիւննե-
րուն դէմը ապերախտութիւն կը դնենք,
ի՛նչ պիտի ընենք անատենը : Հարունա-
կենք անոնք, թէ և անանկ թըլին թէ պա-
րապ տեղը կը շարունակվինկոր : Ինչու
համար ապերախտ մարդոց բազմութիւնը
իրենց երախտագիտութեանը արժանաւոր
ըլլալու մեր յօժարութիւնը պիտի խափա-
նէ : Յարատեւենք մեր մարդասիրութեանը
մէջ, թէ և անիկա անանկ երեսայ թէ՛ փուճ-
տեղը կը կորստվիկոր : Մենք մարդասիրու-
թիւն ցուցնելու ետեէ ըլլանք միշտ, թէ և
յոյսերնիս համար մէկէն երախտիք մը ըն-
դունելու : Չի գադրինք բարեգործութիւն
ընելէն, հապա ջանանք արդարնեջուն ան-
խոտոր ճանապարհին հետեւիլ :

Անեւա :

Չնողքները պարտին իրենց մատաղաջ զաւը-
նեցուն ընտելութիւն ընել տալ սիրոյ ու ողորմու-
թեան գործքերը, որչափ կանուխ որ կարելի է :
Կոստանդիանոս մեծ ինքնակալը իր ազան գի-
րելու սկզբածին պէս անոր ձեռքովը կը գրէր նե-
րողութիւնները. ու իրեն մեծ հաճութիւնն էր
տղին ընդունը զրուցել՝ երբոր մէկուն շնորհք
մը պիտի ըներ : Երկա պատուական սկզբաւո-
րութիւն մըն է անանկ թագաւորութեան մը, որ
մարդկային երջանկութեանը համար կը հաս-
տատուի :

Պարտաւորութիւնս չհամարուի :

Այս :

Քովս եկէք Հիմայ իմ զաւկըններս,
Եւ ժամանակ է խաղը ձրգելու .
Ի՞նչ ըրիք, ինտոր անցուցիք օրըս,
Հիմայ ատենն է անոնք ըսելու :

Գիտէ՞ք մեր պարտքն է ամէն իրիկուն,
Երբ արեգակը մարը կըմոնէ,
Նոյն օրվան մերին դործած մեղքերուն
Մըթթիւք Ներում խնդրել Աստուծմէ :

Բայց թէ աղօթքէն առաջ որ խորհինք
Եւ մէկ մէկ ըսենք մեր յանցանքները,
Ես կերպովս մենք աղէկ կըտորվինք
Փախչիլ անոնցմէ հետեւալ օրը :

Յակոբ՝ առաջ դուն պարտիս զրուցել,
Քանզի դուն մեծ ես, սիրական տղաս .
Ի՞նչ մեղք գործեցիր, ի՞նչ բարիք ընել
Կրցար դուն ասօր, ըսէ անպակաս :

Յակոբ :

Սարիկ ես քեզի կըհրնաղանդիմ,
Եւ ըրածներս լման կըպատմեմ .
Մօր ժիր էի, ես ծոյլ չի կեցայ,
Եւ իմ համարըս աղէկ տորվեցայ :

Սակայն իմ վերաս բարկութիւն եկաւ,
Ու անով մեծ մեծ մեղքեր գործեցի .
Երբ պատաւ Մնան իմ հետըս ինկաւ,
Իր քրթախոտը առի թափեցի :

Երբ թռուցիկըս Տիգրանը պատռեց,
Կրակ կըտրելով վերան վաղցի .
Խեղճ տղայ, ինտոր ծեծիս համբերեց,
Կըսմթեցի ան և ճանկըտեցի :

Այս :

Ո՛հ, խիստ տրտում եմ ատոնք լսելու .
Ի՞նչ, չէի՞ր կընար անոնց ներելու .
Երբոր դուն տղաս, օրը շատ անգամ
Հանցանք կըգործես չի զըրուցվելու :

Կաղօթենք Տեառնը որ ներէ մեզի,
Ինչպէս ուրիշին ալ մենք կըներենք .
Թէ Աստուած մեր հետ ասանկ որ վարվի,
Որչափ քիչերնիս ողջ պիտի ապրինք :

Գնա՛ աղօթէ՛ որ Աստուած ներէ
Քուկին ասօրվան դործած մեղքերուդ .
Ու ասիկ ետեւ ալ քեզի օգնէ,
Որ դուն ալ ներես քու ընկերներուդ :

Թռուցիկ . ուշուրիս :

Հիմայ դուն Հոլշան սիրուն աղջիկըս,
Դուն եկոր նայիմ՝ ի՞նչ ունիս ըսել .
Կըցուսամ որ դուն ասօրվան օրըս
Աղէկ վարվիլդ պատրաստ ես պատմել :

Հոլշան :

Ո՛հ, չէ՛ չէ՛, մարիկ քեզի ըսեմ ես,
Որ բոլոր օրը ծուլութիւն ըրի .
Եւ դուն շատ անգամ ինծի ըսեր ես,
Թէ ասիկա ալ մեղք մը չէ պղտի :

Իրաւ մարդու մը ես չի բարկացայ,
Բայց առարկնէ մինչև իրիկուն
Պիտանի բան մը տորվել չի կրցայ .
Ո՛չ ալ բարիք մը ես ըրի մէկուն :

Սակայն չարութիւն և կամ մէկ զէն մը
Կըխոստովանիմ որ չի գործեցի .
Միայն թէ օրվան անգին ժամերը,
Խաղով խնդալով ասօր վատնեցի :

Այս :

Դուն ալ իմ փոքրիկ աղջիկըս դուն ալ
Տըրտում ըլլալու պատճառ մը ունիս .
Ենգին ժամերդ վատնել, ծոյլ մնալ,
Իրաւ գէշ բան էր . ալ չընել պարտիս :

Ո՛հ՝ պարտիք տորվել սիրուն զաւկընք,
Որ ձեր ամէն մէկ ազնիւ ժամերը
Աստուծոյ փառքին համար են տորվեր,
Կամ ուրախ ընել ձեր ընկերները :

Եւ ան ամէն մէկ ժամերուն համար
Որ Աստուած մեզի կուտայ երբ հոս եմք,
Իրեն առջև պիտի տանք համար
Անշուշտ մէկ օր մը ամէնիս ալ մենք :

Ամէն իրիկուն դեռ մենք չի պառկած,
Գործած մեղքերնուս վըրայ պարտինք լալ .
Եւ իւրաքանչիւր ծուլութեամբ վատնած
Դամերուն համար պարտինք մենք ողբալ :

Ուրեմն եկէք՝ Աստուծոյ առջին
Օղջացած սըրտով դուք խոնարհեցէք,
Եւ աղօթելով աղօթք լըսողին,
Ներում թողութիւն իրմէն խնդրեցէք :

Փառաւորեցէք ան Բարերարը,
Որ ձեզ բարիքով միշտ կըրեցունէ .
Եւ իր հայրական խնամքը սերը
Ամէն օր ձեզմէ անպակաս կընէ :

Հարցում :

Ինչո՞ւ համար սովորութիւն եղած է Ապրիլէ
առջի օրը մարդ խաբել :

Ստանել . Ապրիլէ հարձ էլիս :